



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
« **ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ**»

Արմենակ Մինասյան
Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

«13» 06 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 56

Ձեռնարկողը՝

«Մեդալա Մայնինգ Գրուպ» ՍՊԸ

Ք. Երևան, Հյուսիսային պ. 1 փարածք, 2/3

Գործունեությունը՝

**Շամբի բազմամեդալների հանքերևակման տեղամասում
2017- 2020թթ երկրաբանական ուսումնասիրության
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ**

«Սյունիքի մարզ»

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝



Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 56

'13' 06 2017թ.

Շամբի բազմամետաղների հանքերնական տեղամասում 2017-2020թթ. երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Պատվիրատու՝	<<Մետալս Մայնինգ Գրուպ>> ՍՊԸ
Նախագծող՝	<<Մետալս Մայնինգ Գրուպ>> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ՀՀ Սյունիքի մարզ

Ըստ նախնական գնահատման հայտի՝ ՀՀ Սյունիքի մարզի Շամբի հանքահան դաշտի ընտրված տարաբնույթի հանքերնական 8.77կմ² մակերեսով տարածքում, երկրաբանական աշխատանքների կատարման ծրագիրը կազմված է <<Մետալս Մայնինգ Գրուպ>> ՍՊ ընկերության նախաձեռնությամբ և ֆինանսական միջոցներով՝ հենվելով տեղամասում նախկինում կատարված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքների վրա:

Աշխատանքների նպատակն է հանքային դաշտում կատարել երկրաբանական երթուղիներ, անցնել հետախուզահորեր, հոտախուզառուններ, հորատել հորատանցքեր, կատարել երկրաքիմիական աշխատանքներ, կատարել հանքաքարի քիմիական և տեխնոլոգիական հետազոտություններ լաբորատոր և գործարանային պայմաններում, կատարել երկրաֆիզիկական և երկրաքիմիական հետազոտություններ, օգտակար հանածոյի որակական և քանակական գնահատականը տալու նպատակով, միաժամանակ առանձնացնելով հանքային դաշտի հեռանկարային տեղամասեր, հետազայում մանրակրկիտ հետախուզում կատարելու և հանքային դաշտը գնահատելու համար:

Կատարված աշխատանքների արդյունքներով հանքային դաշտի սահմաններում կտրվի ոսկու, արծաթի, պղնձի, մոլիբդենի և ուղեկից այլ մետաղների պաշարների գնահատում C₁ և C₂ կարգերով, իսկ հեռանկարային տեղամասերի պաշարները կգնահատվեն ըստ P₁ կարգ: Որոնողագնահատողական աշխատանքները կիրականացվեն վերգետնյա՝ մինչև 4.5մ խորությամբ հետախուզահորերի և մինչև 2.0մ խորությամբ հետախուզառունների անցմամբ, 185.0-250.0մ խորությամբ սյունակային խորքային հորատանցքերի հորատմամբ, որոնողահանությամբ երթուղիների, երկրաքիմիական և տոպոգրաֆիական հանույթային աշխատանքների միջոցով: Կկատարվեն նաև լաբորատոր հետազոտություններ:

Որոնողագնահատողական աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2 փուլով:

Handwritten signature and stamp: *Արմաշ 5և 6 օրինակ* [Signature]



1) առաջին փուլը կնդգրկի որոնողազանահատողական աշխատանքների կատարումը, որի ժամանակ հանքային մարմինները կուսումնասիրվեն մակերեսային փորվածքների և հորատանցքերի միջոցով, որոնց արդյունքներով կտրվի օգտակար հանածոների գնահատականը C_2 և P_1 կարգերով,

2) երկրորդ փուլը կշարունակվի միայն առաջին էտապի աշխատանքների ժամանակ դրական արդյունքներ ստանալու դեպքում: Այս էտապում հետախուզական ցանցի խտացման միջոցով կկատարվի օգտակար հանածոյի պաշարների հաշվարկ C_1 և C_2 արդյունաբերական կարգերով:

Իրականացվող աշխատանքների արդյունքներով նախատեսվում է ճշգրտել առանձնացված հեռանկարային տեղամասերի երկրաբանական կառուցվածքը, հանքամարմինների ձևաբանության ու տեղադրման տարրերի, օգտակար հանածոյի նյութական կազմի, որակի մասին տեղեկատվությունը, ինչպես նաև հիմնավորել տեղամասի հեռանկարային գնահատականը և մանրակրկիտ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նպատակահարմարությունն ու անհրաժեշտությունը:

Աշխատանքների կատարման ժամկետների սկիզբը նախատեսվում է 2017թ-ի II-րդ եռամսյակին և ավարտվելու է՝ 2020թ.-ի I-ին եռամսյակին:


Հանքային դաշտի սահմաններում 1:2000 և 1:10000 մասշտաբի երկրաբանական քարտեզների կազմման նպատակով նախատեսվում է կատարել տոպոգրաֆիական հանույթ 8.77կմ² մակերեսի վրա, այդ թվում՝ Դարպասի համայնքում՝ 1.37կմ², Որոտանի համայնքում՝ 1.23կմ², Ույծի համայնքում 0.97կմ², Տոլորս համայնքում՝ 5.2կմ²:

Նախատեսվում է հետախուզափորվածքների (մակերեսային) նմուշարկման պլանների կազմում և բոլոր փորվածքների մարկշեյդերական սպասարկում ամբողջ աշխատանքների տևողության ընթացքում: Նախատեսվում է հետազոտվող տարածքի վրա ստեղծել 1 և 2 կարգի տրանզույացիոն ցանց և 1:100 մասշտաբի ստորգետնյա փորվածքների հատակագծերի կազմում:

Հանքային դաշտի սահմաններում նախատեսվում է կատարել 1:2000 և 1:10000 մասշտաբների որոնողական երթուղիներ, հանքային դաշտի երկրաբանական կառուցվածքի և սահմանների ճշտման, նոր հանքամարմինների հայտնաբերման համար: Ըստ գնահատման հայտի նախատեսվում է անցնել շուրջ 32.0կմ երթուղիներ, այդ թվում 21.0կմ-ը 1:10000 մասշտաբի և 11.0կմ-ը 1:2000 մասշտաբի: Եկրկաբանական երթուղիները կիրականացվեն հետևյալ ծավալներով՝ Դարպասի համայնքում 8.5կմ /5.5կմ-ը 10000 մասշտաբի և 3կմ-ը 2000 մասշտաբի/, Որոտանի համայնքում 6.2կմ /4կմ-ը 10000 մասշտաբի և 2.5կմ-ը 2000 մասշտաբի/, Ույծի համայնքում 2.8կմ /1.8կմ-ը 10000 մասշտաբի և 1կմ-ը 2000 մասշտաբի/, Տոլորի համայնքում 14.5կմ /10.0կմ-ը 10000 մասշտաբի և 4.5կմ-ը 2000 մասշտաբի/:

Տեղամասի հանքային գոտիները խորքում հետախուզելու նպատակով նախատեսվում է հորատել 11 հատ հորատանցք 185-250մ խորությամբ՝ 2425զծ.մ ընդհանուր ծավալով, այդ թվում՝ Դարպասի համայնքում 2 հորատանցք N6 և N9 - 435զծ.մ ծավալով, Որոտանի համայնքում 1 հորատանցք N 3 - 250զծ.մ ծավալով, Ույծի համայնքում 2 հորատանցք N1 և N2 - 500զծ.մ ծավալով, Տոլորի համայնքում 6 հորատանցք N N 4, 5, 7, 8, 10 և 11 - 1240զծ.մ ծավալով: Այդ հորատանցքերից NN 1, 2, 3, 4, 5 և 6 հորատանցքերից յուրաքանչյուրի խորությունը նախատեսվում է 250զծ.մ, իսկ NN 7, 8, 9, 10 և 11 հորատանցքերից յուրաքանչյուրի խորությունը 185զծ.մ: Հորատումը կատարվելու է ՈՒԳԲ-1-BC ինքնաշարժ հորատող հաստոցով, 132մ տրամագծի ավաստե հորատող թագիկներով:

Հորատհանուկի նվազագույն էլքը յուրաքանչյուր երթում պետք է լինի 97%-ից ոչ պակաս: Հանքային դաշտի ոչ լիարժեք ուսումնասիրման պատճառով հորատանցքերը նախագծով չեն կապվում տեղանքի հետ: Դրաց տեղադիրքը կճշտվի երթուղիների անցման, ինչպես նաև որոշակի մակերևութային աշխատանքներ կատարելուց և հանքային գոտիների կառուցվածքը որոշակիորեն ճշտելուց հետո:



Նախատեսվում է հորատել 11 հորատանցք, որի համար 11 անգամ կկատարվի ՈՒԳԲ-1-BC ինքնագնաց հորատող հաստոցի տեղակայում և ապատեղակայում:

Հանքային դաշտի ոչ լիարժեք ուսումնասիրման պատճառով վերգետնյա լեռնային փորվածքները ծրագրով ևս չեն կապվում տեղանքի հետ: Դրաց տեղադիրքը կճշտվի երթուղիների անցման, ինչպես նաև որոշակի մակերևութային աշխատանքներ կատարելուց և հանքային գոտիների կառուցվածքը որոշակիորեն ճշտելուց հետո:

Հանքային մարմինների և գոտիների հզորությունը, տարածումը, դրանց հանքայնացման համասեռությունը, տարածման և բաշխման օրինաչափությունները, ինչպես նաև մարմինների մորֆոլոգիան պարզելու համար նախատեսվում է հետախուզաառուների անցում: Առուների խորությունը նախատեսվում է ընդունել 2մ, լայնությունը՝ 0.85մ (ելնելով հողաբուսական շերտի և հանքային մարմնի օբսիդացման գոտու հզորությունից): Հանքային դաշտում հիդրոթերմալ փոփոխված հզոր գոտիները նախատեսվում է հատել ուղղահայաց ուղղությամբ 7 առուներով, այդ թվում 3-ը՝ 250զծ.մ երկարության և 4-ը՝ 500զծ.մ երկարության: Հետախուզաառուների ընդհանուր ծավալը կկազմի՝ 2750զծ.մ կամ 4675.0մ³: Հետախուզաառուների զբաղեցրած մակերեսը կկազմի՝ 2337.5մ²: Հետախուզաառուների անցումը VI կարգի ամրության ապարներով նախատեսվում է իրականացնել ձեռքի աշխատանքով:

Ընդամենը 4675.0մ³ այդ թվում՝ 1122.0մ³ IV կարգի ապարներով /միջին հզորությունը 0.48մ / և 3553.0մ³ VIII-X կարգի ապարներով, այդ թվում՝ Դարպասի համայնքում 102.0մ³ IV կարգի ապարներով և 148.0մ³ VIII-X կարգի ապարներով, Որոտանի համայնքում 306.0մ³ IV կարգի ապարներով և 969.0մ³ VIII-X կարգի ապարներով, Ույծի համայնքում 102.0մ³ IV կարգի ապարներով և 323.0մ³ VIII-X կարգի ապարներով և Տոլոբսի համայնքում 612.0մ³ IV կարգի ապարներով և 1938.0մ³ VIII-X կարգի ապարներով:


Նախատեսվում է անցնել 14 հետախուզահորեր, յուրաքանչյուրը 4.5մ խորությամբ: Հետախուզահորերի ընդհանուր ծավալը կկազմի 63.0զծ.մ, որից IV կարգի ապարներում՝ 4.2զծ.մ, IX-X կարգի ապարներում 58.8զծ.մ: Յուրաքանչյուր հետախուզահորի մակերեսը մակերևութում ընդունվում է 1.5մ², ամբողջ ծավալը կլինի՝ 94.5մ³:

Փաստագրումից և նմուշարկումից հետո հետախուզական փորվածքները ենթակա են վերականգնման ամբողջ ծավալով՝ հետախուզաառուներ - 4675.0մ³, հետախուզահորեր - 94.5մ³, ընդամենը - 4769.5մ³, այդ թվում Դարպասի համայնք - 438.5մ³, Որոտանի համայնք - 1288.5մ³, Ույծի համայնք - 438.5մ³, Տոլոբի համայնք - 2604մ³:

Նմուշարկման մեթոդիկան ընտրելիս հաշվի կառնվի հանքայնացման բնույթը, հանքամարմինների հզորությունը, ինչպես նրանց տարածման, այսպես էլ անկման ուղղություններով, նրանց կառուցվածքային առանձնահատկությունները: Նմուշարկումը կկատարվի ակոսային և հանուկային նմուշարկման մեթոդներով:

Լեռնային փորվածքների նմուշարկման հիմնական ձևը հանդիսանում է ակոսային նմուշարկումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանքային մարմիններում հանքայնացումը բաշխված է անհամաչափ, ակոսային նմուշները նախատեսվում է ակոսային նմուշի չափերը ընդունել 10սմx5սմ (լայնք և խորություն), իսկ երկարությունը որոշվում է հանքային մարմնի հզորությունից, տեքստուրային և ստրուկտուրային առանձնահատկություններից: Նախատեսվում է նմուշարկումը կատարել հետախուզափորվածքների ամբողջ ծավալի /հետախուզահորեր-94.5մ³, հետախուզաառուներ-4675մ³, ընդամենը 4769.5մ³/ 10%-ի չափով, ակոսի միջին երկարությունը ընդունելով 1.5մ:

Հորատումից ստացված ամբողջ հորատահանուկը ևս ենթարկվում է նմուշարկման: Նմուշարկումը սեկցիոն է: Հորատահանուկի միջին տրամագիծը 76մմ է: Կնմուշարկվեն հորատման ամբողջ ծավալի 95%-ը արմատական ապարներում: Հորատման ամբողջ ծավալը 1.5մ նմուշի միջին երկարության դեպքում կկազմի՝ 1568 նմուշ:



Հանքանյութի քիմիական կազմը, ինչպես նաև հանքաքարում օգտակար հանածոյի որակական կազմը բնութագրելու նպատակով նախատեսվում է կատարվել նմուշարկման աշխատանքներ: Նմուշարկման կենթարկված վերգետնյա բոլոր լեռնային փորվածքները (հետախուզառուները, հետախուզահորերը) և հորատանցքերը:

Նախատեսվում է նաև գործարանային պայմաններում 5 տեխնոլոգիական նմուշների փորձարկում: Հանույթը կատարվելու է հանքային զոնաներից, որոնք կվերցվեն հետախուզառուներից ընդհանուր 1250.0տ ծավալով:

Մշակման ենթակա են ակոսային, հորատահանուկի և համախառն նմուշների ամբողջ քանակը՝ ընդամենը 2189 նմուշ: Նմուշների մշակման աշխատանքների կատարման որակը և ճշտությունը ապահովելու համար պետք է աշխատանքային բոլոր փուլերում իրագործել վերահսկման աշխատանքներ:

Հարգային անալիզների ենթակա են բոլոր 2189 նմուշները: Հաշվի առնելով դրանց արտաքին և ներքին հսկողական անալիզների քանակը (5%), ապա հարգային անալիզների ընդհանուր քանակը կկազմի՝ 2298 նմուշ: Հարգային անալիզների որակը պետք է սխտեմատիկաբար հսկել /համաձայն մեթոդական ցուցումների/: Պատահական սխալի մեծությունը անհրաժեշտ է ստուգել հսկումով՝ անալիզի ենթարկված նմուշների կրկնօրինակների կողմովորված կրկնակի անալիզով:

Հանքային դաշտում ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով նախատեսվում են կատարել համապատասխան դիտարկումներ: Ինժեներաերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել.

- հանքավայրի ապարների զանգվածների առանձնահատկությունները,
- դրանց անհզոտրոպիան, դրանց ճեղքավորվածությունը,
- ապարների կազմը,
- ապարների կազմվածքային յուրահատկությունները և այլն:

Նախատեսվում է կատարել նաև հանքերևակման ներփակող և պարփակող ապարների ֆիզիկամեխանիական հատկությունները, որով կորոշվի ապարների կայունությունը բնական պայմաններում: Շամբի բազմամետաղների հանքային դաշտի հիդրոերկրաբանական պայմանները բնութագրվում են նրա երկրաբանական կառուցվածքով, ռելիեֆի ձևաբնութայամբ և տեղումների քանակով: Ըստ ռելիեֆի բնութագրիչ հատկությունը հանդիսանում է տեղանքի կտրտված ռելիեֆի և կիրճերի առկայությունը՝ մեծաթեք, տեղ-տեղ համարյա ուղղաձիգ լանջերով: Հիդրոերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել հանքային հորիզոնները ջրաբքի դարձնող հիմնական ջրատար հորիզոնները, ուսումնասիրել ջրի որակը, կատարել ռեժիմային դիտարկումներ:

Նախատեսվում է 11 հորատման հրապարակների կառուցում (մեկ հորատման հրապարակի մակերեսը 35.0մ²) ընդամենը 385.0մ² մակերեսով և 25.0կմ, 1.5մ լայնությամբ ճանապարհի նորոգում: Վերակնգնման ենթակա հողաշերտի ծավալը ճանապարհների և հորատման հրապարակների համար կկազմի /վերականգման ենթակա շերտի հզորությունը ըստ նախնական դիտարկումների կազմում է միջինը 0.30մ/՝ համապատասխանաբար 11250.0մ³ և 115.5մ³:

Ընդերքի ուսումնասիրման աշխատանքները անմիջականորեն կապված են շրջակա միջավայրի պահպանման խնդիրների հետ: Որոնողական աշխատանքների իրականացումը շջակա միջավայրի վրա կունենա որոշակի ազդեցություն և այդ ազդեցությունը նվազեցնելու կամ բացառելու նպատակով կկիրառվեն բնապահպանական հետևյալ միջոցառումները.

- պարբերաբար կհսկվեն մթնոլորտային օդի մաքրությունը հորատման հրապարակներում, ավտոճանապարհների վրա, նկատի ունենալով, որ օդում փոշու սանիտարական նորման չպետք է գերազանցի 0,004գ փոշի օդի 1մ³-ում;

- փոշեզրկման նպատակով աշխատանքային գոտիներում պարբերաբար կկատարվի ջրցանում;



- օգտագործվող ագրեգատները կաշխատեցվեն սարքին վիճակում վնասակար գազերի գերնորմատիվային արտանետումները բացառելու համար:

Ընդհանրացնելով և վերլուծելով ներկայացված նախնական գնահատման հայտը, ՀՀ բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված կարծիքները, 29.05.2017թ. Տոլոբսի համայնքապետարանի տարածքում իրականացված հանրային քնարկումների արձանագրությունը, ինչպես նաև փորձաքննական գործընթացում առաջարկությունների և դիտողությունների հիման վրա կատարված լրամշակումները կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

Որոնողահետախուզական աշխատանքների իրականացման համար ընտրված տեղամասը զբաղեցնում է 8.77կմ² /877հա/ տարածք և ընդգրկում է Դարպասի /1.37կմ²/, Որոտանի /1.23կմ²/, Ույծի /0.97կմ² / և Տոլոբսի /5.2կմ²/ համայնքները: Ընդ որում հայցվող տեղամասի 38.6հա-ը անտառային հողեր են, որից 6.04հա-ը գտնվում է Որոտան համայնքի վարչական տարածքում, իսկ 32.57հա-ը Տոլոբս համայնքի վարչական տարածքում: Այդ տարածքներում փորվածքների անցում և այլ աշխատանքներ չեն նախատեսվում: Երկրաբանական ուսումնասիրության համար ընտրված տարածքը զուրկ է անտառածածկույթից: Միայն շատ փոքր տարածքներ կան Տոլոբսի համայնքում որոնք անտառածածք են, որտեղ չի նախատեսվում լեռնային փորվածքների անցում (այսինքն հողային ծածքի խախտում և ծառահատումներ) չի նախարեսվում:

29.05.2017թ. Տոլոբսի համայնքապետարանի տարածքում իրականացված հանրային քնարկումների ժամանակ հանրության կողմից հնչեցին դրական կարծիքներ և հավանություն նախատեսվող գործունեության վերաբերյալ: Նշվեց, որ ըստ նախնական գնահատման հայտի նախատեսվում է նշված տարածքում իրականացնել միայն երկրաբանահետախուզական աշխատանքներ: Իսկ անտառային հողերում աշխատանքները կիրականացվեն համաձայն ՀՀ կառավարության N 1045-Ն որոշման պահանջների: Հետագա հանքի շահագործման աշխատանքները կիրականացվի երկրաբանահետախուզական աշխատանքների դրական արդյունքների և հաստատված պաշարների հիման վրա համապատասխան նախագծային փաստաթղթերի կազմումից հետո, որը համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի փորձաքննության կենթարկվի երկու փուլով՝ որպես Ա կատեգորիայի նախատեսվող գործունեություն:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում հետախուզաառումների, հետախուզահորերի և խրամների, հողային զանգվածների բեռնման, բեռնաթափման և տեղափոխման, շինարարական տեխնիկայի տեղաշարժման ժամանակ կառաջանան անօրգանական փոշու արտանետումներ, շինարարական տեխնիկայի շարժիչների աշխատանքի արդյունքում կառաջանան դիզելային վառելիքի այրման արգասիքների արտանետումներ, որոնք կունենան ժամանակավոր բնույթ և կարտանետվեն հարթակային աղբյուրներից:

Հետախուզվող տարածքում նախատեսվում է բացառել անտառահատումը, իսկ որպես հորատման հրապարակները սպասարկող ճանապարհներ օգտագործել ամառանոցներ տանող ճանապարհները, վերջիններս բարեկարգելով: Ջրային ավազանի կեղտոտում տեղի չի նախատեսվում, քանի որ հանքերնակման տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Աշխատանքների իրականացման ժամանակ անհրաժեշտ է հետևել բնապահպանական միջոցառումների կիրառմանը, որոնք ընդգրկում են հետևյալ հարցերը.

- օդային ավազանի պահպանումը վնասակար արտանետումներից՝ ջրցանման և աշխատանքներում սարքին մեքենասարքավորումների օգտագործմամբ;



- ջրային ավազանի պահպանումը կեղտոտումից՝ հորատման ժամանակ օգտագործվող ջրերը հատուկ կահավորված փոսորակներում հավաքմամբ և կրկին օգտագործմամբ, բացառելով ջրերի արտահոսքը;

- ապահովել լանդշաֆտների վերականգնման աշխատանքները՝ կատարելով խախտված հողերի լեռնատեխնիկական ռեկուլտիվացիա;

- հողերի պահպանության կարգի պահանջների ապահովում:

- կանխարգելել կամ մեղմացնել էկոհամակարգերի վրա մարդածին բացասական ազդեցության գործոնը;

- աշխատանքների հետևանքով բնությանը հասցված բացասական ազդեցությունների վերացում:

Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է հետախուզաառուների, հետախուզահորերի, հորատահարթակների կառուցման ժամանակ հանել հողի շերտը, պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆտի վերականգնման նպատակով ծածկել հողաշերտով: Ռեկուլտիվացիայի ենթակա հողերի ծավալը հաշվարկվում է էլնելով հետախուզա-առուների, հետախուզահորերի տարածքի մակերեսից և հողաբուսաշերտի 0.30մ վերականգնման պայմանից: Հետախուզաառուների, հետախուզահորերի և հորատման հրապարակների ընդհանուր տարածքի մակերեսը կազմում է 2743.5մ² /հորատահրապարակներ 385.0մ², հետախուզաառուներ 2337.5մ² և հետախուզահորեր 21մ²/, որտեղ հողաբուսական ծածկ առկա է միայն 52% մակերեսում, մնացած մակերեսը մերկ ժայռեր են: Ռեկուլտիվացիայի ընդհանուր ծավալը կազմում է՝ 428.0մ³, որը կատարվելու են ձեռքով: Ռեկուլտիվացիայի ընդհանուր գումարը կկազմի 448837.0 դրամ, այդ թվում հորատահրապարակների համար՝ 62986.0 դրամ, հետախուզաառուների՝ 382415.0 դրամ և հետախուզահորերի՝ 3436.0դրամ:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ժամանակ ժամանակավորապես օգտագործումից դուրս եկած հողերի ընդհանուր մակերեսը կազմում է 2743.5մ² կամ 0.27հա: Հողօգտագործման համար վնասի փոխհատուցման գումարը համայնքներին կկազմի՝ 40.5 հազ.դրամ:


Նախնական գնահատման հայտում ներկայացված բնապահպանական միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա նվազեցնելու կամ մեղմելու իրականացվող աշխատանքների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև վերահսկելու նախատեսվող աշխատանքների գործընթացը: Նախատեսված միջոցառումների արդյունքում տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով, կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Նշեմ նաև, որ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի հոդված 20-ի 7-րդ կետի՝ փորձաքննական եզրակացությունը կորցնում է ուժը, եթե նախատեսվող գործունեության իրականացումը չի սկսվում փորձաքննական եզրակացության տրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ (մասնավորապես՝ սեփականաշնորհված, գյուղնշանակության /ինչպես նաև անտառային/ հողատարածքներում աշխատելու նպատակով):

2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում էլնելով տարածքի յուրահատկությունից, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտի փաստաթղթերում ամրագրված բնապահպանական (մասնավորապես՝



տարածքում առկա ջրային /գետեր, աղբյուրներ/ ցանցը աղտոտումից զերծ պահելու և պահպանությանն ուղղված, բացառելով անտառային հողերում հողաշերտի խախտումը և ծառահատումները) միջոցառումների և սոցալ-տնտեսական ծրագրի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցից միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:

3. Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում առաջացած շինադրի կուտակումն և հեռացումն (կենցաղային աղբ), ինչպես նաև ջրօգտագործումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Մետալս Մայնինգ Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված <<Շամբի բազմամետաղների հանքերնական տեղամասում 2017-2020թթ. երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների>> շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ



Կ. Մովսիսյան